


թեամբ: Եթէ հաճոյ է Ձեզ էջմիածնատիպ շարական, այդ կարող եմ այս տեղ գնել և բերել հետս:

Աւարտումեմ թուղթս, մաղթելով յաստուածուստ շուտով ողջ և առողջ արժանացնել զմեզ միմեանց քաղցր տեսութեանը. ուղարկումեմ Ձեզ և մերայինների յարգութեան և սիրոյ ողջոյնքը: ¹⁾

Ձեր Ս. Նազարեանց:

Յ. Տ. Յակովբեան



ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱԶԳԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ.

(տ. Արարատ, 1914, դեկտ.)

Բ.

Այս սկզբունքները մի անգամ պարզելուց յետոյ, դժուար չէ այլ ևս տեսնել թէ ինչպէս կարելի է ապացուցանել լեզուների ազգակցութիւնը:

Ամեն ուր որ ձայնական համակարգութիւնն ու քերականական համակարգութիւնը ներկայացնում են ճշգրիտ համերաշխութիւններ, ուր կանոնաւոր համերաշխութիւններ թոյլ են տալիս ճանաչելու բառերի և ձայնական համակարգութեան նախատիպի (origine) նոյնութիւնը, և ուր քերականական ձևերի համակարգութիւնը բացաղբուրում է մեկնելով միևնոյն հասարակաց նախատիպից, ազգակցութիւնն ակնհերե է: Ռոմանական լեզուներն ակնյայտնի կերպով ազգակից են, որովհետև նախ՝ մանրամասնութեանց

1) Արանով վերջանում են Նազարեանի Թիֆլիզից դրած նամակները Փանեանին, որովհետև նա, Նազարեանը, 1871 թւի ամառայ վերջերին տեղափոխուում է Մոսկւա՝ Լազարեան ձեմարանի պարսկերէնի ուսուցչապետութեան պաշտօնով: Այսպէս ուրեմն, Ներսիսեան դպրոցի երկամեայ տեսչութեան ընթացքում Նազարեանը գրել է Փանեանցին ընդամենը 28 նամակ (№№ 13-ից մինչև 42), չհաշուած այդ թւում այն մի նամակը (№ 44), որ նա գրել է ճանապարհից (Կերչից) 1869 թ. օգոստ. 14-ին, տեսչական պաշտօնով Մոսկուայից դէպի Թիֆլիս գալու ժամանակ: Այնուհետև մօտ 2 տարի բոլորովին ընդհատուում է Նազարեանի նամակադրութիւնը Փանեանցին, որը վերսկսուում է սակայն 1873 թ. մայիսից եւ տեւում մինչև Նազարեանի մահը: Այդքան ժամանակի ընթացքում դրուած է ընդամենը 9 նամակ, զանազան վայրերից, զիսաւորապէս դէպի Պետերբուրգ, Դանիա, Զուիցբրիա եւ Գերմանիա արած ուղեւորութեան միջոցում: Յ. Տէր-Յակ.

իրար միջև ցոյց տուած համերաշխութիւնը մեծաքանակ է և երկրորդ՝ նրանց քերականութիւնն ու ձայնական համակարգութիւնն ամբողջովին բացաղբուծ են մի հասարակաց նախատիպով: Քերականութեան նոյնութիւնն ակներև է. օրինակ, աներեւոյթի մէջ, իտալ. *cantare*, սպան. *cantar*, ֆրանս. *chanter*. սահմ. ներկայում, եզ. 3-րդ դէմք, իտալ. և սպան. *canta*, ֆր. *chante*. յոգ. 3-րդ դէմք, իտալ. *cantano*, սպան. *cantan*, ֆրանս. *chantent*. անց. կատ. եզ. 2-րդ դէմք իտալ. *cantasti*, սպան. *cantaste*, ֆրանս. *chantas*. յոգ. 2-րդ դէմք, իտալ. *cantaste*, սպան. *cantasteis*, ֆրանս. *chantâtes*, ևն: Ինչպէս այս էջերում իսկ¹, ցոյց տուաւ պ. Գրամմոնը, ազգակցութեան պարագան շատ է դիւրացնում լեզուների ուսումը նմանօրինակ դէպքերում. հէնց այն միայն, որ սպան. *h* = իտալ. և ֆր. *f*-ի, նախատեսել է տալիս շատ բառերի ձևը, ինչպէս սպան. *haba* = իտալ. *fava*, ֆրանս. *fève*. սպան. *hacer*, իտալ. *facere*, ֆրան. *faire*, ևն: Միևնոյն ժամանակ նկատելի է, որ սպան. *h*, որ զարտուղութեան նման է երևում ուսմանական լեզուների ձայնական համակարգութեան մէջ, կերպանափոխումն է *f*-ի, և, սրանով էլ պարզում, որ սպաներէնը պատմականօրէն վերադառնում է սոյն լեզուների հետ մի ընդհանուր տիպի: Բացի սրանից սոյն լեզուների բացարձաններն ևս միաբան են իրար հետ բաւական լայն չափով. այն հանգամանքը, որ սպաներէնն ունի մեծ քանակութեամբ արաբերէն բառեր, որոնք գոյութիւն չունին ոչ իտալերէնում և ոչ ֆրանսերէնում, կամ որ ֆրանսերէնում կան գալլիական և գերմանական բառեր՝ որոնք բացակայում են թէ իտալերէնում թէ ֆրանսերէնում, ոչինչ չի փոխում ազգակցութեան խնդրում, որովհետև դրանք փոխառութիւններ են: Լեզուների ազգակցութեան ապացոյցն այնքան աւելի հաստատ է, որքան մօտենում է մեր համառօտակի նկարագրած սոյն պարագային:

Ինքնին հասկանալի է, որ, մի լեզուական ազգակցութիւն բացաղբուծ համար, պէտք է մի կողմ թողնել այն ամենը ինչ որ բացաղբուծ է բոլոր լեզուների համար հասարակաց ընդհանուր պայմաններով: Օրինակի համար, գերանունները կարճ բառեր են լինում, պարզապէս այնպիսի ձայնական տարրերով կազմուած, որոնց արտասանութիւնը դիւրին է, և ընդհանրապէս զերծ են

1) «Scientia», երկամսեայ միջազգային գիտական հանդէս, որ լոյս է տեսնում Բոլոնիայում (Իտալիա) իտալ., ֆրանս., անգլ. եւ ֆրանս. լեզուներով. ներկայ յօդուածը արտատպութիւն է ԺԵ. հատ. № XXXV — 3-ից, — ակնարկուած յօդուածը տպուած է ԺԲ. հատ. № XXIV — 4-ում (1912), էջ՝ 72 եւ շար.

բաղձայնական խմբերից: Սրանից հետևում է, որ գերանուններն ամեն տեղ, առերի կամ պակաս չափով, իրար նման են. մի իրողութիւն, որ սակայն ծագման նախատիպի նոյնութիւն չի ննթադրում: Իսկ միւս կողմից յաճախ իրար շատ նման լեզուների մէջ գերանուններն իրար ընաւ նման չեն. օրինակի համար՝ համեմատեցէք հայերէնի գերանունները գոթերէնի կամ իրլանդերէնի գերանունների հետ: Հետևապէս լեզուական ազգակցութիւնը որոշելու համար գերանուններն զգուշութեամբ պէտք է օգտագործել:

Մեր ներկայ յոգւածի մէջ ընաւ ի նկատի չեն առնուած կազմական այն ընդհանուր նմանութիւնները, որ իբրեւ օրինակ յիշատակուած լեզուները կարող են ներկայացնել: Վերցնենք ֆրանսերէնն ու անգլերէնը. երկուսի մէջ էլ բառերը դասաւորւում են որոշ քերականական կարգով. երկուսն էլ գոյականի առաջ գործ են ածում յօդ. երկուսն էլ գործ են դնում փոքրիկ երկրորդական բառեր ցոյց տալու համար պատկանելութիւն, ստորոգում, են. բայց սրանցից ոչ մէկը չի կարող ապացոյց ծառայել մի հասարակաց նախատիպի, որովհետեւ, մէկ կողմից, բառերի այն կարգերը, որոնց մասին խօսւում ենք, չափազանց քիչ դանդաղութիւններ են ներկայացնում, այնպէս որ համեմատելութիւնները արժէք չունին, միւս կողմից միևնոյն քերականական արժէքն ունեցող փոքրիկ երկրորդական բառերը, որոնք գործ են ածում սոյն երկու լեզուների մէջ, չեն առաջանում հասարակաց նախատիպերից. օր. անգլ. the և ֆր. le, անգլ. of և ֆր. de, անգլ. to և ֆր. à, անգլ. we և ֆր. nous, անգլ. you և ֆր. vous, անգլ. he և ֆր. il, հասարակաց ոչինչ չունին: Եթէ չլինէին, մէկ կողմից, հին գերմանական բարբառները և, միւս կողմից, լատիներէնը, ֆրանսերէնի ու լատիներէնի ազգակցութիւնը չսլիտի ապացուցուէր: Չինարէնն ու Սուդանի լեզուներից մէկն ու մէկը, օրինակ, Իահոմէյի լեզուն կամ ելէերէնը (ewe), կարող են նոյնպէս գործ ածել կարճ բառեր, ընդհանրապէս միավանկ, ելեէջի համեմատ փոփոխել բառերի նշանակութիւնը, հիմնել իրանց քերականութիւնը բառերի դասաւորութեան և երկրորդական բառերի կիրառութեան վրայ. սրանից չի հետևում սակայն, որ չինարէնն ու ելէերէնը ազգակից լեզուներ են, որովհետեւ ձևերի թանձրացեալ մանրամասնութիւնը համեմատել չէ. նշանակում է՝ միայն արտայայտութեան տարերական մասերի համեմատելութիւնն է որ կարող է ապացուցել: Այս է պատճառը, որ ապացոյցների վերաբերմամբ խօտապահանջ լեզուաբանների աչքում հաստատուած չէ ուրախալուտայական ընտանիքի գոյութիւնը, որին մի ժամանակ այնքան կարևորութիւն էին ընծայում. մէկ կողմից թուրքերէնի և, միւս կողմից, ֆիններէնի և հունգարերէնի միջև կան քերականական

կազմի վերաբերեալ համերաշխութիւններ, սակայն ազգակցութիւնն ապացուցողը այն համերաշխութիւնն է, որ պէտք է գոյութիւն ունենայ արտայայտական միջոցների տարերական մանրամասնութեան մէջ. արդ, եթէ կան որոշուած ձևակերպութիւններ, որոնք հասարակաց են ֆիններէնին ու հունգարերէնին և ֆիններէնն ու հունգարերէնը կարող են բացաղբուել մի հասարակաց լեզուով (տեսնել, օրինակ, պ. Շիննիէյի Finnisches Sprachwissenschaft խորագրով գրքոյկը), ոչ մի այդպիսի բան չի հաստատուած ֆիննո-ուգրերէնի ու թուրքերէնի միջև և հէնց դրանով էլ ազգակցութեան հարցն ինքնին վերանում է: Եթէ երկու կողմն էլ ամեն ձև կերտում են միայն վերջադիր մասնիկներով, մեծ նշանակութիւն են տալիս ձայնաւորական ներդաշնակութեան, ևն, այս և սրանց նման երևոյթներն ազգակցութեան ապացոյցներ չեն կարող լինել:

Երբ «Anthropos» հանդէսում (1913, VIII, էջ 389 և շար.), իր «The Determination of Linguistic Relationship» խորագրով յօդուածի մէջ, մի հոյակապ ամերիկագէտ, պ. Կրէօրէր, բողոքում էր ձևաբանական կազմուածքի ընդհանուր համերաշխութեանց կիրառութեան գէմ, հաստատելու համար լեզուական ազգակցութիւններ, նա միանգամայն իրաւացի էր: Միայն թէ չպէտք էր հետևեցնել դրանից, թէ ազգակցութիւնները պէտք է հաստատուին բառարանի քննութեամբ և ոչ թէ ձևաբանութեան, ինչքան էլ արդարացի լինի, պ. Կրէօրէրի քննադատութիւնը չի արդարացնում այն ամերիկագէտների մեթոդը, որոնք բառարանական համերաշխութեանց վրայ են հիմնում իրանց հաստատութիւնները այս կամ այն լեզուների իրերամէջ ազգակցութեան վերաբերմամբ: Քերականական համերաշխութիւններն ապացուցում են, և միայն նրանք են ապացուցում, բայց պայմանով, որ դրա համար գործ ածուի ձևերի տարերական մանրամասնութիւնը և հաստատուի, որ որոշ մասնաւոր քերականական ձևեր, քննութեան առնուած լեզուների մէջ, վերադառնում են մի հասարակաց նախատիպի: Բառարանական համերաշխութիւններն երբեք չեն ապացուցում, որովհետև երբեք կարելի չէ հաստատել, որ նրանք չեն բացաղբուել փոխառութիւններով: Յայտնի է այժմ, որ հունգարերէնի պարունակած բազմաթիւ թուրքերէն բառերը ոչ մի փաստ չեն բերում հիմնաւորելու թուրք և հունգար լեզուների ազգակցութեան ենթադրութիւնը: Եթէ բառարանից դատուի, ոչ ոք չի կարող ասել, անգլերէնը գերմանական լեզու է թէ ռոմանական, մինչդեռ բառական է մի ակնարկ ձգել քերականութեան վրայ, և ամեն կասկած կը վերանայ. ոչ մի բան անգլերէն քերականութեան տարերական մանրամասնու-

Թեան մէջ չի բացաղբում լատիններէնով, այլ ամեն բան բացաղբում է այնտեղ գերմանականի հին քերականութեամբ: Ճշմարիտ է, որ արդի անգլերէնի ձևաբանութեան ընդհանուր կազմը հին գերմանականի ձևաբանութեան կազմից բոլորովին տարբեր է, բայց այս նշանակութիւնն չունի. ազգակցութիւն չի նշանակում իրական նմանութիւնն համեմատութեան առնուած լեզուների. և ընդհակառակը կան շատ նմանութիւններ, թէ ընդհանուր կազմի, թէ բառարանական, որոնք ազգակցութիւնն չեն ենթադրում:

Պ. Կրէօքէրն իր վերոյիշեալ յօդուածում շեշտում է, թէ ինչքան կարևոր է ուշադրութեան առնել լեզուների աշխարհագրական հարևանութիւնը: Անտարակոյս շատ յաճախ ազգակցից լեզուները խօսւում են յարակից կամ դէթ իրար մօտ մթնոլորտներում: Բայց, մի կողմ թողած այս կողմ իրողութիւնը, պէտք է ընդունել որ (աշխարհագրական դիրքերի) յարակցութիւնը ազգակցութեան լեզուաբանական ապացուցման աւելի փնասում է քան օգնում. հարևան լեզուները նրանք են, որոնք ենթարկուել են միեւնոյն ազդեցութիւններին, որոնք մէկը միւսից փոխառութիւններ են արել կամ երկուսն էլ միեւնոյն փոխառութիւններն արել ուրիշ լեզուներից: Լեզուների յարատեւութիւնն ուրեմն պարտաւորում է դնել յաճախ շատ փափուկ մի բաժանում լեզուի կատարած փոխառութեանց և նախկին բնիկ սեփականութեան միջև, որ միակ նիւթապէս ապացուցողն է ազգակցութեան: Եւ, ընդհակառակը, աշխարհագրական մեծատարած հեռավորութիւնը չի արգելած լեզուաբաններին ցոյց տալու, որ Մադագասկարի լեզուն ներկայացնում է միեւնոյն հին լեզուն ինչ որ են Բոռնէօի, Զաւալի և Ֆիլիպպեան կղզիների լեզուները:

Ինչպէս կան ազգակցից լեզուներ, որոնք այլ ևս իրար շատ քիչ են նման, այնպէս էլ արտաքին զօրեղ նմանութիւնը երկու բառերի միջև իրաւունք է տալիս լեզուաբանին տարակուսելու, որ նրանք ներկայացնելիս լինին նախատիպ լեզուի միեւնոյն բառը: Ֆրանսերէն feu և գերմաներէն feuer բառերի միջև ոչինչ չկայ հասարակաց, մինչ, ընդհակառակը, գերմաներէն feuer-ը վերադառնում է դէպի մի նախատիպ, որ ուրիշ կողմից ներկայացնում են իրարից բաւական տարբեր բառեր—յունարէն πῦρ (պիր), հայերէն հուր և իրլանդերէն uir. Ուրեք գիտեն, որ լատիններէնը, գերմանական լեզուները, սլաւերէնն ու հայերէնը ներկայացնում են միեւնոյն, համեմատաբար հին, հասարակաց լեզուն, այդպիսիներին շատ հեշտ է ցոյց տալ թէ ինչ առնչութիւն կայ ֆրանսերէն Ginq-ի (որ ներկայացնում է լատիններէն quinque) և նրա համազօրների միջև—անգլ. five, ռուս. пять և հայ. հինգ: Ոչ թէ արտաքին նմանութեան վրայ հիմնուելով են համեմատութեան առ-

նում լեզուարաններն այդ բառերն և նրանց ստուգարանութիւնն անում, այլ համապատասխան երևոյթների կանոնաւոր (հետևողական) բանաձևերի վրայ: Այսպէս յունական և սլաւական ք-ին բառակցքում համապատասխանում են հայերէնում ն, գերմանականում ֆ և կելտականում բաղաձայնի բացակայութիւնը: Այս բանաձևերը, մի անգամ հաստատուելուց յետոյ, միջոց են տալիս ճանաչելու արտասանութեան պատմութիւնն իր մեծամեծ գծերի մէջ և հաստատելու, թէ ինչպէս են իրար յաջորդել ձայնարանական համակարգութիւններն ազգակից լեզուների մէջ:

Ինչպէս արդէն նկատեցինք, ազգակցութիւնն ապացուցելու համար, կարիք չկայ պահանջելու, որ քերականական բոլոր ձևերը բացառութիւն ստանան. բաւական է հաստատել, որ նկատի առնուած լեզուի մէջ յարաբերում են հին ձևաբանութեան կարևոր մասերը: Եւ ոչ մի տեղ լեզուական ազգակցութիւնն հաստատելն այնքան հեշտ չէ որքան հնդեւրոպական լեզուների միջև, որովհետև այն հասարակաց լեզուն, որի վրայ հիմնում են այս ընտանիքի բարբառները, շատ բարդ ձևաբանութիւն ունէր և նրա ձևերից բազմաթիւ մնացորդներ պահպանուած են իւրաքանչիւր հնդեւրոպական լեզուի մէջ. այդպիսի մնացորդներից են, օրինակ, յունարէնի անկանոն բայերը, գերմանականի ուժեղ բայերը, ևն: Ամեն ուր որ պատահինք հնդեւրոպական բայական համակարգութեան կարևոր մնացորդների, համակարգութեան որ կարելի է ճանաչել հին հնդկաիրանական լեզուների և հին յունարէնի ներկայացրած ամենահին գրուածներից, կարող ենք փտան լինել, որ մեր առաջ կայ մի հնդեւրոպական լեզու: Ազգակցութիւնը կատարելապէս ապացուցուած կարելի է համարել, եթէ կարելի լինի միևնոյն հին տարրերի կերպարանափոխութեամբ բացաղբել երկու տարրեր լեզուների ամբողջ քերականական համակարգութիւնը:

Սակայն ժամանակի ընթացքում ազգակից լեզուները վերջի վերջոյ այնքան են հեռանում իրարից, որ այլ ևս անձանաչելի է դառնում, թէ զրանք միևնոյն նախատիպից են առաջացած: Օրինակի համար, եթէ հնդեւրոպական խմբից ունենայինք միայն ֆրանսերէնը, բուլղարերէնն ու նոր հայերէնը, հեշտութեամբ չպիտի կարողանայինք հաստատել այս երեք լեզուների ազգակցութիւնը և ոչ ոքի մտքով չպիտի անցնէր գրելու սրանց հոմանմատական քերականութիւնը: Բաւական է սակայն քննութեան առնել այդ միևնոյն լեզուները, միայն թէ մի քանի հարիւր տարի առաջուայ ձևերով, այն է լատիներէնը, հին սլաւերէնը՝ որով կատարուած են առաջին թարգմանութիւններն, ու դասական հայերէնը, և ազգակցութիւնն պինդ կը դառնայ, որով կարելի կը լինի նաև ընդգծել սոյն երեք լեզուների համեմատական քերա-

կանութեան էական սկզբունքները: Այսպիսով երկու լեզուների ազգակցութիւնը կարող է անապացուցանելի լինել, և յաճախ է իսկ, մինչդեռ ազգակցութիւնն իրապէս գոյութիւն ունի: Երբեք իրաւունք չունինք պնդելու որ երկու լեզուներ, զոնէ հեռուանց հեռու, ազգակից չեն. ազգակցութիւնը կարողանար թերեւս երեւան գալ, եթէ միևնոյն լեզուներէից ունենայինք աւելի հին ձևեր:

Թէև դժուար է անթերի կերպով ապացուցել լեզուական ազգակցութիւնները, այնուամենայնիւ ցարդ հաստատուած է մի քանի լեզուական մեծ ընտանիքների գոյութիւնը. — հնդեւրոպական ընտանիք, անսահմանօրէն տարածուած, որի պատմական զարգացմանը հետևում են մօտ 3000 տարուց ի վեր. սեմական ընտանիք, նուազ ընդարձակ, բայց որի առջին գրաւոր յիշատակարաններն աւելի հին են. ֆիննո-ուգրեան ընտանիք. բանտուեան ընտանիք. ինդոնեսեան ընտանիք. պոլինեզեան ընտանիք (եզականօրէն մի լեզուից բաղկացած). դրավիդեան ընտանիք. հարաւային կովկասեան ընտանիք. և դեռ ուրիշներ: Ինչպէս տեսնում ենք, սկզբունքը միայն Եւրոպայի համար չէ կիրարկելի, կամ հնդկերոպական լեզուների համար, կամ քաղաքակրթութեան մեծ լեզուների համար. նա ընդհանրապէս ընդունելի է: Կան դեռ հարցեր, որոնց վերաբերմամբ դեռ հարկ եղած աշխատութիւնը չի կատարուած, բայց արդէն պարզ կերպով տեսնում ենք, որ կարելի է հրապարակ հանել մի քանի ուրիշ լեզուական որոշ ընտանիքներ. օրինակ, հաւանական է մի համիտական ընտանիքի գոյութիւնը, որի համեմատական քերականութիւնը սակայն դեռ չի կազմուած: Բաւական է մի մեթոդական աշխատութիւն՝ անվրէպ կերպով յանգելու համար որոշ հետեանքների մի շարք հարցերի վերաբերմամբ:

Բայց կան մեծ դժուարութիւններ:

Ամենից առաջ մի իրական դժուարութիւն: Չքաղաքակրթուած ժողովուրդների լեզուներից շատերի համար կան միայն բառաւորներ, իսկ քերականութիւնը կամ անծանօթ է և կամ շատ մասնաւոր կերպով է ծանօթ: Այսպիսի դէպքում եթէ նկատում ենք բառարանական մեծաքանակ նմանութիւններ որոշ լեզուների միջև, և եթէ այդ նմանութիւնները վերաբերում են այնպիսի բառերի, որ ամենից նուազ ենթակայ են փոխառութեան, այսինքն՝ բայեր, որոնք ցոյց են տալիս յովորական գործողութիւններ ինչպէս գնալ և գալ, խմել և ուտել, ապրել և մեռնել, լսել և տեսնել, ասել և լռել, ևն, կամ թէ ածականներ ինչպէս նիւն և նոր, մեծ և փոքր, երկար և լայն, ևն, իմաստակութիւն պիտի լինէր ուշ չդարձնել այսպիսի օրինակների վրայ: Միայն թէ այս կերպով ձեռք բերուած ապացոյցի ճշգրտութիւնը չպէտք է մեզ չափա-

զանցութեան մղէ, ինչքան էլ շատ յաճախ որոշ քանակութեամբ բառերի նոյնութիւնը ազգակցութիւն ցոյց տայ: Երբ ուրիշ փաստեր չկան, կարելի է առ ժամանակ, և անհրաժեշտ վերապահումներով, կիրարկել այս կերպով ստացուած ցուցումներ: Բացի դրանից բառարանի ուշադիր դիտողութիւնը նման դէպքերում, գրեթէ միշտ առաջնորդում է երեան հանելու քերականական որոշ դուգադիպութիւններ, որոնք ևս աւելի հաստատում են ապացուցումը:

Երկրորդ դժուարութիւնն այն է, որ մասնաւոր լեզուները որոշ չափով խուսափում են վերը նկարագրած դիտողութեանց հետեանքն եղող սահմանումից: Բայց իսկապէս չեն խուսափում, այլ, ընդհակառակը, որոշ տեսակէտից, նոյն սահմանումն աւելի ևս հաստատում են. մասնաւոր լեզուներն ընդհանրապէս ոչ սեփական արտասանութիւն ունին և ոչ սեփական քերականութիւն. օրինակ, Ֆրանսական առգօի (ծածկալեզու) միակ յատկանիշն իր մասնաւոր բառերն են: Եւ այս ցոյց է տալիս, թէ ինչքան բառարանն անկախ է ձայնարանական և ձևարանական համակարգութիւններից, որոնք լեզուի որոշիչներն են. առգօն մի մասնաւոր լեզու է Ֆրանսերէնի ծոցում: Այս պարագան երբեմն շատ հեռու է գնում. օրինակ, հայ բոշայերէնը իսկ և իսկ հայերէն է արտասանութեան և քերականութեան կողմից. պատճառն այն է, որ Հայաստանի բոշաները, գիտենալով հայերէնը, միայն և միայն հայերէնի համակարգութիւնն են գործածել, բայց ցանկանալով խօսել մի մասնաւոր լեզու, որ անբնական է լինէր շրջապատող ժողովրդին, պահել են իրանց աւանդական բառարանը: Այս հանգամանքը կրկին գալիս է ասելու, որ բնականոն կեանքով ապրող ժողովուրդների համար կատարուած լեզուական ազգակցութեանց ընդհանուր սահմանումը շատ յարմար չի գալիս մակաբոյծ ժողովուրդների մասնաւոր լեզուների համար: Այնուամենայնիւ, քանի որ, ինչպէս այս դէպքում, ոչ ձայնարանական տեսակէտից ոչ էլ քերականական տեսակէտից, խառնուրդ չկայ, սկզբունքն ամենայն ճշտութեամբ հաստատուում է:

Երրորդ, կան լեզուներ, որոնք շրջապատուած մի այլ ընտանիքի պատկանող լեզուներով և, ըստ երևութին, կղզիացած բեկորներ մի անյայտացած ընտանիքի, ոչ խմբակցում են հարևան լեզուների հետ ոչ իսկ յիշեցնում որ և է ծանօթ լեզու: Նրանց քերականական կազմը ճշգրիտ համերաշխութիւններ չի ներկայացնում որ և է լեզուի հետ, կամ գոնէ ցարդ չեն մատնանշուած: Օրինակ, բասկերէն¹⁾ լեզուն: Մի հոյակապ լեզուաբան, մին այն միշտ

1) Խօսուում է Ֆրանսիայի հարաւ-արեւմտեան եւ Սպանիայի հիւսիս-արեւելեան մասերում:

հազուադիւս մարդկանցից, որոնք օժտուած են հարուստ ծանօթութիւններով և որոնց հոգածութեան առարկան ոչ թէ այն է ինչ որ արդէն յայտնի է այլ այն ինչ որ դեռ մնում է գտնելու, պ. Ն. Շուքարդ, սկսեց հետախուզել, թէ արդեօք բասկերէնի և համիտական լեզուների միջև չկան արդեօք որոշ համերաշխութիւններ. նա բասկերէնից ցոյց տուաւ բառեր, որոնք յիշեցնում են նուբիական և առ հասարակ համիտական բառեր, և այս հաւերաշխութիւնները մատնանիշ արաւ երկու նոր յօդուածների մէջ, Բայց ընդգծուած համերաշխութիւնները տարտամ բաներ են: Ակնյայտ չէ, որ նման համերաշխութիւններ կարելի չէ գտնել բասկերէնի և որևէ լեզուական խմբի բառարանների միջև Իր Baskisch und Hamitisch (Բասկերէն և Համիտերէն) խորագրով յօդուածի մէջ, էջ 6 (արտատպութիւն Revue internationale des études basques հանդէսից, VII, 1913), պ. Շուքարդն ասում է, որ երիտասարդ մարդիկ, որոնց նայուածքը դեռ բաւական չի ձևակերպուած, բառական համամեմատութեանց մէջ շատ բան, չափազանցօրէն, պատահական են համարում, մինչդեռ բոլորովին այլ կերպ կը դատէ մարդ, ասում է, երբ բառերի համամատութեանց քաջ ընտելացած և այս խնդրում ձեռք բերած լինի մի որոշ վիճակագրական զգացում: Սակայն չի կարելի մի վարդապետութիւն հիմնել անհատական զգացման վրայ: Միւս կողմից եթէ նոյնիսկ մատնանշած բառական նմանութիւնները պատահական էլ չեն, միջոց չունինք ցոյց տալու, որ դրանք փոխառութեան արդիւնք չեն: Գուցէ մեզ առարկեն, որ եթէ հնդերոպական լեզուներից մնացած լինէին միայն արդի ֆրանսերէնն ու արդի հայերէնը, այս երկու լեզուների ազգակցութեան միակ հետքերը որ կարելի լինէր գտնել, լինելու էին այնպիսի բառեր ինչպէս ֆր. mère, հայ. մէր կամ մաւր, նայած բարբառին. կամ ֆր. dix հայ. տաս կամ դաս, նայած բարբառին. և արդարև այս բառերն արժէքաւոր հետքեր են սոյն երկու լեզուների ազգակցութիւնը ճանաչողների համար, բայց ապացոյց չէին համարուիլ նրանց համար, ովքեր ծանօթ չեն այդ ազգակցութեան, և իրողութիւն է, որ սոյն բառերի ակնբախ նմանութիւնն հետևանք է մի շարք պատահական արկածների: Փոխանակ նմանուելու, այս բառերն ևս կարող էին անսման լինել ինչպէս ֆր. père և հայ. հէր կամ հաւ, ֆր. vingt և հայ. քսան, որոնք նոյնպէս ազգական են իրար. և նախատիպի նոյնութիւնն անկարելի պիտի լինէր ճանաչել ուղղակի: Հետևաբար եթէ կարելի է նախ և առաջ հաստատել բառական նմանութիւններ երկու կամ աւելի լեզուների միջև ցոյց տալու համար թէ ճիշդ կողմից պէտք է սկսել հետազոտութիւնը, այդ դեռ բաւական չէ մի ճշգրիտ ապացոյց ձեռք բերելու համար. բառարանը կարող

է հետազոտութեան ուղղութիւնը միայն որոշել տալ, իսկ ապացոյցն ուրիշ տեղ պէտք է որոնել:

Վերջապէս, լեզուական ազգակցութեանց ապացուցման այս եղանակը շատ լաւ կիրարկելի է այնպիսի լեզուների համար, որոնց սկզբնատիպն ունեցել է մի բարդ քերականութիւն: Հնդկ-ըռոպական կամ բանտուեան ընտանիքի վերաբերմամբ զգուարութիւն չկայ. ցորչափ հետազոտութեան առարկայ են այնպիսի լեզուներ, որոնք ժամանակի շատ մեծ անջրպետով և կամ շատ խոր կերպարանափոխութիւններով չեն բաժանուած հասարակաց շրջանից, իրերը նոյնիսկ շատ յաճախ հէնց առաջին հայեացքից ակներև են դառնում: Հին հնդկըռոպական լեզուներից շատեր, ինչպէս գոթիերէնը կամ սլաւերէնը, ունին այնպիսի քերականութիւն, որ շատ տարբեր է հնդկըռոպականի հին քերականութիւնից. բայց այս վերջինից, թէ կանոնաւոր և թէ մասնաւոր անկանոն ձևերի մէջ, այնքան բան կայ դեռ մնացած այդ լեզուներում, որ նրանց հնդկըռոպական նկարագիրն իսկոյն տեսանելի է դառնում առանց ապացոյցի: «Թոխարերէն»ը, որ վերջերս գտնուեց կենտրոնական Ասիայում, ինչքան էլ կերպարանափոխուած, ինչքան էլ հեռացած էր հին հնդկըռոպական տիպից, հէնց առաջին իսկ հայեացքից ճանաչուեց որ հնդկըռոպական լեզու է. հնդկըռոպական քերականական առանձնայատկութիւնների թիւը դեռ մեծ է նրանում: Բայց այնպիսի լեզուների վերաբերմամբ, որոնք քերականութիւն գրեթէ չունին, որոնց գրեթէ ամբողջ քերականութիւնը ոչ այլ ինչ է բայց և թէ մի քանի կանոններ բառերի այս կամ այն կերպ դասաւորութեան, ինչպէս են ծայրագոյն արևելքի կամ Սուդանի որոշ լեզուները, մեր նկարագրած մեթոդը չի անցնիլ: Այդ դէպքում լեզուական ազգակցութեանց հարցը գործնականօրէն անլուծելի է, մինչև գտնուին դատանիչեր (critère), որոնք միջոց տան հաստատելու, որ այս տիպի լեզուները առաջացած են իրարից, և այն բառական նմանութիւնները, որ ընծայում են, փոխառութեան արդիւնք չեն: Սրանով չենք ուզում ասել, թէ այլուր կերարկելի սկզբունքն այս դէպքում վատանում է. միայն թէ, ուղում ենք ասել, որոշ լեզուներ, ծանօթութեանց ներկայ վիճակում, դեռ չեն ենթարկուած մի ազգաբանական դասաւորութեան: Թէ ինչպէս պէտք է գլուխ բերել այդ դասաւորութիւնը, դրա մասին պարտաւոր են մտածել այն լեզուաբանները, որոնք զբաղւում են այդ լեզուների ուսումնասիրութեամբ: Անկարելի բան չէ, եթէ միայն կարողանան սկզբունքի աւելի ողուն հաւատարիմ մնալ քան թէ տառին:

Եթէ նոյնիսկ լուծում էլ չստացուի, դրա համար չպէտք է դատաւիւտել լեզուաբանների անկարողութիւնը. անուրանալի է,

որ որոշ պարագաններում կարելի է լեզուական ազդակցութիւնն ապացուցել զուտ լեզուական իրողութիւններով. բայց զարմանալի չպիտի թուի, եթէ այս ապացուցումը միշտ հնարաւոր չլինի. բնական է, որ նա կիրարկելի լինի միայն այն դէպքերում, ուր նկատի առնուած իրողութիւնները ժամանակի չափազանց երկար անջրպետով բաժանուած չեն բուն պատմական շրջանի սկզբից: Լեզուների ազդարանական դասաւորութեան հէնց բնոյթն է պահանջում, որ այդ դասաւորութիւնն անկատար լինի: Նա հնարհատէ պիտի կատարելագործուի ցորչափ աւելանան փաստերը նկատի առնուած լեզուների պատմութեան նկատմամբ:

Ուզում ենք ասել, որ լեզուների միւլենոյն նախատիպից առաջացած լինելու հարցը, որ զբաղեցնում է որոշ լեզուաբանների, ներկայումս չպէտք է վէճի առարկայ լինէր: Այն հարցերը, որոնց պարզաբանումն այս տեսակէտից օգտակար է, նրանք են, որ վերաբերում են ընդհնմարում բայց դեռ ճշտիւ չուսումնասիրուած ընտանիքների որոշման: Յարկ որոշուած ընտանիքները կամ նրանք են, որ հեշտութեամբ յայտնում են կամ նրանք որ պարունակում են կարեւոր քաղաքակրթական լեզուներ: Աւելի վհատեցուցիչ է այն աշխատանքը, որ այսուհետեւ է գործ դրուելու, որովհետեւ խնդիրը վերաբերում է մասամբ այնպիսի լեզուներին, ուր ազդակցական առնչութիւնները հեշտութեամբ չեն հաստատուում, մասամբ էլ վայրենի և քիչ ծանօթ լեզուների, որոնց ուսումնասիրութիւնը զրեթէ ոչ ոքի համար, գործնական տեսակէտից, ձեռնառու չէ: Մինչև այժմ հեշտութեամբ հաստատուել է ազդակցութիւնն այն լեզուների, որոնցից կային լաւ քերականութիւններ և որոնց բանասիրութիւնը (բանասիրական ուսումնասիրութիւնները) կատարուած էր. այժմ այնպիսի լեզուների առաջ ենք կանգնած, որոնց քերականութիւնը դեռ պէտք է պատրաստել և որոնց մեծ մասը, առ ի չգոյէ հին գրաւոր յիշատակարանների, զուրկ է բանասիրութիւնից: Կայ ուրեմն դիտողական մի մեծ աշխատութիւն, որ դեռ պէտք է կատարուի: Եթէ աւելի շատ հետեանքների չի հասած լեզուաբանութիւնը, պատճառն ամենից առաջ աշխատողների թուի քչութիւնն է կամ այս աշխատանքը կատարելու կարող հոյակապ գիտնականների բացակայութիւնը: Լեզուների ազդարանական դասաւորութիւնը շուտ վերջացնելու համար բաւական է կազմել լեզուաբաններից մի քանի խմբեր: Միայն մի աշխատող էլ բաւական կարող է համարուել զրեթէ մի համեմատական քերականութիւն, երբ կան լաւ նկարագրութիւններ (նկարագրական ուսումնասիրութիւններ լեզուների), ինչպէս պ. Բրանդտէտտէրը, որ այս պահուս կազմում է Լինդոնսեան լեզուների համեմատական քերականութիւնը:

Անհիմն է կարծել, թէ որոշ հասարակաց լեզուներ, որոնցից սերած են ցարդ հաստատուած մեծ ընտանիքները, իրանք ևս նոյնպէս մի հնագոյն լեզուի կերպարանափոխութիւնները չեն: Օրինակի համար կարելի է մտածել, որ հնդերոպական, սեմական (ազգակից համիտականին), հարաւային կովկասեան և ֆիննո-ուգրեան լեզուները ծագած են մի աւելի հին լեզուից. արդէն մատնանշուած են համերաշխութիւններ հնդերոպականի և սեմականի միջև, հնդերոպականի և ֆիննո-ուգրեանի միջև, հարաւային կովկասեանի և Սեմականի միջև: Սակայն այս համերաշխութիւնից շատերը բառական համերաշխութիւններ են և չեն կարող ապացուցիչ համարուել. իսկ այն համերաշխութիւնները որ քերականական են, պարզ չեն և թուով շատ քիչ են: Ապացուցումը դեռ չի կատարուած. կարող է կատարուել այն օրը միայն, երբ կազմ ու պատրաստ լինի սեմականի ու համիտականի համեմատական քերականութիւնն, ինչպէս և հարաւային կովկասեան լեզուախմբինը, որից թերևս չպէտք է անջատել հիւսիսային կովկասեան լեզուները, որոնք շատ այլազան են. պէտք է ուշադրութեան առնել նաև Փոքր-Ասիայի լեզուները— լիւկերէնը, որ ցարդ անըմբռնելի է մնացել, հիտաիտերէնը՝ որ չի վերծանուած, և այնպիսի հեռաւոր լեզուներ ինչպէս ելամերէնը: Այս առթիւ առաջ կը դան մեծ հարցեր, որոնց լուծումը սակայն անյուսալի չէ: Բայց վերջին ժամանակներս շատ յաճախ սխալմամբ կամեցել են վճռել այս հարցերը առանց անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները կատարած լինելու: Յորչափ համիտական, ինչպէս և կովկասեան լեզուախմբերի համեմատական քերականութիւններն ուրուագծուած չեն, ցորչափ, հետևապէս, սեմական լեզուների ճշգրիտ դիրքն անծանօթ է, վաղաժամ է սեմական ընտանիքը հնդերոպականի հետ կապելու փորձը:

Սակայն լաւագոյն լեզուաբաններն անգամ ապարդիւն աշխատած պիտի լինին, եթէ ուղղակի ձեռք առնեն իրարից չափաբանց տարբեր լեզուներ. թերևս կարելի լինի մի օր իրար մօտ բերել հնդերոպականի, սեմականի, համիտականի, կովկասեանի, ֆիննո-ուգրեանի համեմատական քերականութիւնները, որովհետև այս դէպքում կայ մի ենթադրութիւն (hypothèse), որ կարելի կը լինի ստուգելու փորձ անել, երբ նախապատրաստական աշխատութիւնները բաւարար չափով կատարուած լինին: Բայց այժմեանից համեմատել լատիներէնը, երրայեցերէնն ու վրացերէնը՝ զուր է: Այս կարգի ամեն փորձ մի ակներև սխալ է մեթոդի դէմ:

Ինչպէս տեսնում ենք, լեզուների ազգաբանական դասաւորութիւնը կենսաբանական դասաւորութիւններից տարբեր բան է: Կենսաբանները համեմատում են իրար հետ կենդանիներ, որոնք

ընախօսական նման կազմուածքներ ունին և որոնց մէջ գտնէ իւրաքանչիւր անհատի զարգացման սկզբնաւորութիւնը, սկսած առաջին բջիջից, կարող է համեմատուել միւսների զարգացման սկզբնաւորութեան հետ, ուրիմն և այնպիսի էակներ, որոնք, իրանց անհատական զարգացման մէջ, իրապէս ընծայում են հասարակաց նկարագրեր, եթէ նոյնիսկ յետոյ, հափաճան վիճակում, իրանց արտաքին երևոյթն ու իրանց գործարաններից մի քանիսի գործունէութիւնները իսպառ տարբերուին: Հաւանական է, և այսպէս էլ առ հասարակ ընդունուած է, որ այս կերպով ի մի դասակարգուած կենդանիները սերելիս լինին միեւնոյն նախահօրից կամ յար և նման նախահայրերից: Բայց այս ենթադրութիւնը, որ բացաղբում է հաստատուած նմանութիւնները, դասաւորութեան սկզբունքը չէ, թէև կենսաբանները ձգտում են հետզհետէ աւելի ուշադրութիւն դարձնել թէ ինչ եղանակով են այլափոխուած իրանց ուսումնասիրած և դասաւորած էակները: Լեզուաբանն, ընդհակառակը, քննութեան է առնում միայն մի պատմական իրողութիւն, այն է՝ մի հին լեզուի և նորագոյն լեզուների միջև եղած անընդհատ կապը: Իրերի ներկայ վիճակում, անգլերէնն ու ռուսերէնը երկու բացարձակապէս տարբեր տիպի լեզուներ են և հազիւ կարելի է որոշել նրանց մէջ մի քանի նման բառական տարբեր: Բայց այս արգելք չէ, որ երկուսն էլ հնդեւրոպական լեզուներ լինին. սրա ապացոյցն այն է, որ արդի անգլերէնը շարունակութիւնն է հին անգլերէնի, և արդի ռուսերէնը՝ հին ռուսերէնի. արդէն անգլերէնի և հին ռուսերէնի մերձեցումը կարող է ապացուցուել ուղղակի. մասնաւանդ հեշտ է ապացուցել, որ գերմանական լեզուախումբը, որի մի մասն է անգլերէնը և սլաւ լեզուախումբը, որի ներկայացուցիչներից է ռուսերէնը, երկուսն էլ հասարակաց հնդեւրոպական լեզուից վերցրած ձևեր են: Յորչափ կայ միևնոյն ընտանիքին պատկանող երկու լեզու, նրանց պատկանելութիւնն այդ լեզուին անխախտելի է, ինչ կերպարանափոխումների էլ ենթարկուին, մինչև անգամ եթէ մուտ գտած այլափոխումները ոչ մի հետք չթողնեն երկու լեզուների հասարակաց նախատիպից:

Որոշել թէ այսինչ լեզուն պատկանում է այս ինչ ընտանիքին, մի փաստ է, որի հաստատումն անհրաժեշտ է այդ լեզուի պատմութիւնն անելու համար: Սակայն, այդ փաստը միանգամ ձեռք բերելուց յետոյ, մնում է որոշել տեղի ունեցած փոփոխութեանց ամբողջ մանրամասնութիւնը և ընդգծել այն ազդեցութիւնները, որոնց ենթարկուած է լեզուն: Այս փոփոխութիւններն ու այս ազդեցութիւնները յաճախ շատ աւելի են լինում վերջնական արդիւնքի մէջ քան սկզբնական լեզուն: Լեզուների ազգակցութեան գիտութիւնն անվիճելի մի փաստ է. սակայն

նա մէկն է միայն այն փաստերից, որոնցով գործում է լեզուի պատմիչը:

Ծան. Թարգմանութեանս առաջին մասում մուտքուած է յիշեկ, որ ծանօթութեանց մի մասը, որ վերաբերում է զանազան հեռաւոր լեզուների, քաղուած է Ֆ. Ն. Ֆինկի, ներկայ յօդուածի սկզբում յիշատակուած աշխատութիւնից, աւանց քննադատելու հանգուցեալ հեղինակի կարծիքները:

Ա. Մէյլէ.

Պարիս, Կոլէժ դը Ֆրանս.

Թարգմ. ֆր. Մ. վարդ. Մախուդեանց

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ—ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Գարեգին վ. Յովսէփեան. Քարեկ հայ հնագրութեան, արտատպութիւն «Շոգակաթ» գիտական ժողովածուից.
Վաղարշապատ, 1915, գին 4 ո.

Հայ բանասիրութիւնն անձկութեամբ սպասում էր մի այնպիսի գիտական լուրջ գործի, որպիսին է հ. Գարեգին վարդապետի ներկայ աշխատութիւնը: Գործը աւելի է պարունակում քան ինչ որ վերնագիրն է խոստանում: Հայր սուրբը 95 ընդարձակ տախտակներով տալիս է 150 նմոյշ հայ հնագրութիւնից սկսած է. դարի սկիզբներից մինչև ԺԸ. դար, քաղելով ոչ միայն ձեռագրերից ու արձանագրութիւններից, այլ և ձեռագրերի կողքերից, մասունքների պահպանակներից ու սրանց նման այլ աղբիւրներից, որոնց վրայ ցարդ արժանի ուշադրութիւնը չէր դարձուած, թէև անհրաժեշտութիւնը միշտ էլ շեշտուել է: Հ. Գարեգինն հասել է իր առաջադրած նպատակին, այն է՝ դադափար տալ հայ գրչութեան աստիճանական դարգացման մասին, որը ըմբռնելի դարձնելու նպատակով իւրաքանչիւր նմոյշի համար տուել է հակիրճ բայց լրիւ բացադրութիւններ գործի առաջին մասում: Պատմական դէպքերի համեմատութեամբ և գիտութեան ընծայած փաստերի հիման վրայ շատ տեղ, ուր լուսանկարուած յիշատակաբանում թուական չկայ, հեղինակն հաւանական ենթադրութիւններով որոշել է ժամանակը:

Ի հարկէ, եթէ ծանօթ չլինէին մեզ այն բազմաթիւ դժուարութիւնները, որոնք անբաժան են այսօրինակ հրատարակութիւն-